

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՐԵԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՐԵԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը «պատճառած գույքային վնասի» բառերից հետո լրացնել «, կաշառքի, ապօրինի վարձատրության» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 83-րդ հոդվածի 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 87-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում «83-րդ հոդվածով սահմանված վաղեմության» բառերը փոխարինել «83-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: